# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
## ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 17

12/12/2011

## ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ.-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16 հոդվածի 3 կետի պահանջներով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Մխչյան համայնքի 2011թ.-ի բյուջեի եկամտային մասում կատարվել է սխալ պլանավորում՝ Տեղական ինքնակառավարման մարմիններին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար նախատեսվել է 600000/ վեց հարյուր հազար/ դրամ, սակայն ֆինանսավորում է 300000/երեք հարյուր հազար/ դրամով:

Նույն փոփոխությունը կատարել ծախսային մասում՝

1. Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի /04.02.01.51/ գործառնական դասակարգման 4241 մասնագիտական ծառայություններ հոդվածից պակասեցնել 300000/երեք հարյուր հազար/ դրամով:

Բյուջեում կատարել նաև հետևյալ փոփոխությունները.

1. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ ծրագրի /11.01.51/ գործառնական դասկարգման 4891/պահուստային միջոցներ/ հոդվածից պակասեցնել 200000/երկու հարյուր հազար/ դրամ և ավելացնել Կենսաբազմազանության և բնության պաշտպանության ծրագրի /05.04.01.51/ գործառնական դասակարգման 4239/Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածին

2. Արտադպրոցական կազմակերպության հիմնանորոգում ծրագրի /09.05.01.54/ գործառնական դասակարգման 5113/Շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում/ հոդվածից պակասեցնել 2000000/երկու միլիոն/ դրամով և ավելացնել.

2.1 Համայնքային մշակույթային և ազատ ժամանցի կազմկերպում ծրագրի /08.02.03.51/ գործառնական դասակարգման 5122/Վարչական սարքավորումներ/ հոդվածին տալ 1500000/մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ:

2.2 Կառավարման մարմնի պահպանում ծրագրի /01.01.01.51/ գործառնական դասակարգման 5122/Վարչական սարքավորումներ/ հոդվածին ավելացնել 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԳԱՄ
2. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԹԱԴԵՒՈՍՅԱՆ ՍԱՇԱ
5. ԽՍԱՋԱՆՅԱՆ ԿԱՄՈ
6. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
7. ՄՀԵՐՅԱՆ ԽՈՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԽՍԱՋԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
## ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 18

12/12/2011

**ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ.-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16 հոդվածի 3 կետի պահանջներով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

Տեղական ինքնակառավարման մարմնի հաստատման 15-ամյակի կապակցությամբ Մխչյան համայնքը արժանացել է <<Լավագույն համայնք>> պարգևի, որի համար ստացել է 1000000 /մեկ միլիոն/ դրամ:Այդ պատճառով Մխչյան համայնքի 2011թ-ի վարչական բյուջեի եկամուտները ավելացել է 1000000 /մեկ միլիոն / դրամով /այլ ոչ հարկային եկամուտներում/:

Նույն փոփոխությունը կատարել ծախսային մասում՝

Այդ 1000000 /մեկ միլիոն/ դրամ գումարը ծախսային մասում ավելացնել կառավարման մարմնի պահպանում ծրագրի /01.01.01.51/ գործառնական դասակարգման 4111 /աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ/ հոդվածին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԳԱՄ
2. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԹԱԴԵՒՈՍՅԱՆ ՍԱՇԱ
5. ԽԱՉԱՆՅԱՆ ԿԱՄՈ
6. ՍԱԹԵՒՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
7. ՄՀԵՐՅԱՆ ԽՈՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԽԱՉԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
## ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 19

12/12/2011

ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ,ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ և ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ԹՎԱՔԱՆԱԿԻ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ և ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Առաջնորդվելով ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16 հոդվածի 26 կետի պահանջներով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Մխչյան գյուղական համայնքի ղեկավարի , համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը:

/թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը կցվում են/

Կողմ -7　　Դեմ -0　　Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԳԱՄ
2. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԹԱԴԵՒՈՍՅԱՆ ՍԱՇԱ
5. ԻՍԱՋԱՆՅԱՆ ԿԱՄՈ
6. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
7. ՄՀԵՐՅԱՆ ԽՈՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ　　ԱՇՈՏ ԻՍԱՋԱՆՅԱՆ

Հավելված 1

Մխչյան գյուղական համայնքի ավագանու

2011 թվականի 12 դեկտեմբերի N 19 որոշման

# ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 68 հ.

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավարը | 1 | 200000 |
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալը | 1 | 85000 |
| Համայնքի ղեկավարի օգնականը | | |
| Համայնքի ղեկավարի խորհրդականը | | |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար ./1.2/ | 1 | 75000 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3/ | 2 | 70000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1/ | 2 | 65000 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2/ | | |
| Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3/ | | |
| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| Օպերատոր | 1 | 50000 |
| Ծաղկաբույծ բանվոր | 2 | 35000 |
| Ցրիչ | 1 | 40000 |
| Բանվոր | 1 | 50000 |
| Պահակ հավաքարար | 1 | 45000 |
| Քարտուղարուհի | 1 | 40000 |
| | | |

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

/Համայնքային ենթակայության հիմնարկ-ձեռնարկությունների աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերն ըստ հերթականության, այդ թվում՝ գյուղապետարանի պայմանագրային աշխատողների

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տարբեր գործառույթներ իրականացնող աշխատակիցներ | | |
| Հարկահավաք | 2 | 50000 |
| Կոմունալ հարցերով պատասխանատու | 1 | 32500 |
| Գերեզմանոցի պահակ | 1 | 40000 |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

## ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Մանկապարտեզի վարիչ | 1 | 70000 |
| Մանկապարտեզի մեթոդ.մանկ. | 0,75 | 60000 |
| Դաստիարակ | 3,75 | 65000 |
| Դայակ | 3,3 | 32500 |
| Խոհարար | 1 | 32500 |
| Բույժ. քույր | 1 | 32500 |
| Լվացքարար | 1 | 32500 |
| Մանկ.խոհ.օգնական, օժանդակ բանվոր | 1,25 | 32500 |
| Երաժշտ.դաստիարակ և ռ.լեզվի դասատու | 1 | 60000 |
| Տնտեսվար | 0,75 | 32500 |
| Գործավար | 1 | 32500 |
| Դռնապահ | 1 | 32500 |
| Պահակ հնոցապան | 1,5 | 32500 |
| Հաշվապահ | 1 | 32500 |
| | | |

## ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Կուլտուրայի տան տնօրեն | 1 | 55000 |
| Գեղմասվար | 1 | 35000 |
| Գրադարանի վարիչ | 1 | 45000 |
| Ֆուտբոլի մարզիչ | 1 | 32500 |
| Պահակ | 2 | 52500 |
| Հավաքարար | 1 | 32500 |
| Ծաղկաբույծ բանվոր | 1 | 32500 |
| | | |
| | | |
| | | |

## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 60000 |
| Բաժնի վարիչ | 1 | 40000 |
| Հաշվապահ | 1 | 40000 |
| Ցերեկային պահակ | 1 | 32500 |
| Հավաքարար պահակ | 1 | 32500 |
| Գործավար | 1 | 32500 |
| Մանկավարժներ | 17 | 40000 |
| | | |
| | | |
| | | |

## ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՐՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

Համայնքի ղեկավար Ա. Խաչանյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
### ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# ՈՐՈՇՈՒՄ N 20

12/12/2011

ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ-Ի
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Տեղական տուրքերի մասին>> ՀՀ օրենքի 16 հոդվածի 18 կետի պահանջներով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Մխչյան գյուղական համայնքի 2012 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

/դրույքաչափերը կցվում են/

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԳԱՄ
2. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԹԱԴԵՒՈՍՅԱՆ ՍԱՇԱ
5. ԽՍԱՋԱՆՅԱՆ ԿԱՄՈ
6. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
7. ՄՀԵՐՅԱՆ ԽՈՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԽՍԱՋԱՆՅԱՆ

ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012թ.-ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի , շինությունների(ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝
հիմնական օբեկտների համար՝
ա) մինչև 300 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների , ինչպես նաև մինչև 200 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար --------------------------------------------------15000 դրամ .

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտի համար՝

բա) 201-ից մինչև 500 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար--------------------30000 դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար --------------------50000 դրամ.

բգ) 1001-ից ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար-------------------------- 70000դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝----------------------------------3000 դրամ.

դ) 20 և ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար--------------------------------5000 դրամ.

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման , արդիականացման , աշխատանքների (բացառությամբՀայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝--------------------------------------------------------------- -----3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է -------------------------------------- -5000 դրամ.
1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույյքաչափերը հաշվարկվում են 0.5 գործակցի կիրառմամբ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինություններերի ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝--------------------- 2000 դրամ.

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար------------- 2000 դրամ.

5. Համայնքի տարածքում՝
ա) բացօդյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ ------------------------------------------------------------------------------- 350 դրամ.
բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար------------------------------------------ ---- -----------------150000 դրամ:

6.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները),խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար------------------------------------------------------------------------------50 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար-----------------------------------------------------50 000 դրամ.

գ) բաղնիքների /սաունաների/ համար ---------------------------------------------------------------------300 000 դրամ

դ) խաղատների կազմակերպման համար---------------------------------------------------------------1 000 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար------------------------------------------------------- 500 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար------------------------------------------------------- 150 000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության
համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝------------------------------------------------------------------------------2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝--------------------------------------------------------------------3500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝------------------------------------------------------------------------1000 դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝--------------------------------------------------------700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական

տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել-----------------------------------------------------------------1000 դրամ:

10. Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել--------------------------------------------------------------------------------10 000 դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

1) Բնակչի պահանջով սեփականաշնորհված , տնամերձ կամ պահուստային հողերը չափելու համար,որպես վարձավճարի չափ սահմանել--------------------------------------------------------------1000 դրամ
2) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար---------------------1000 դրամ:

ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԽՍԱՋԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
## ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
# ՈՐՈՇՈՒՄ N 21

---

12/12/2011

ՄԽՉՅԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ և
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ
ՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16 հոդվածի 19 կետի պահանջներով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Մխչյանի երաժշտական դպրոցի ծնողական գումարները հետևյալ չափով.

ա. դաշնամուր-ամսեկան 4000 /չորս հազար/ դրամ

բ. ջութակ - ամսեկան 3500 /երեք հազար հինգ հարյուր/ դրամ

գ. ժողովրդական նվագարաններ պետական սահմանված քանակից ավելի դեպքում ամսեկան 3000 /երեք հազար/ դրամ

2. Մխչյանի մանկապարտեզի ծնողական գումարները հաստատել հետևյալ չափով.

ա. Ընտանիքից 1 երեխա հաճախելու դեպքում ամսեկան 5000 /հինգ հազար/ դրամ

բ. Ընտանիքից 1-ից ավել երեխա հաճախելու դեպքում ամսեկան 4000 /չորս հազար/ դրամ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԳԱՄ
2. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՍԱՇԱ
5. ԻՍԱՋԱՆՅԱՆ ԿԱՄՈ
6. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
7. ՄՀԵՐՅԱՆ ԽՈՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԻՍԱՋԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
## ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 22

12/12/2011

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով <<Գույքահարկի մասին>> օրենքի 15 հոդվածի 3 կետի պահանջներով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Զիջել ներքոհիշյալ քաղաքացիների գույքահարկը համապատասխանաբար.

Բարսեղյան Սուրիկ-55500 /հիսունհինգ հազար հիյզ հարյուր/ դրամ,Վարդանյան Աշոտ-75150/յոթանասունհինգ հազար հարյուր հիսուն/ դրամ,Գնորգյան Վանիկ-7700 /յոթ հազար յոթ հարյուր/ դրամ,Հովսեփյան Անդրուշ-29000 /քսանինը հազար/ դրամ,Հովհաննիսյան Վիրաբ-29000 /քսանինը հազար/ դրամ,Մանասերյան Հայկարամ-5750 /հինգ հազար յոթ հարյուր հիսուն/ դրամ,Աբրահամյան Հայկ-7700 /յոթ հազար յոթ հարյուր/ դրամ,Խաչատրյան Մարտին-13000 /տասներեք հազար/ դրամ,Մաթևոսյան Արմեն-11200 /տասնմեկ հազար երկու հարյուր/ դրամ,Հրայր Գուլոյան-19800/տասնինը հազար ութ հարյուր/ դրամ,Իշխան Շահբազյան-9000 /ինը հազար/ դրամ , Սաշա Թադևոսյան-7200 /յոթ հազար/ դրամ,Գենիկ Մովսիսյան-9000/ինը հազար/ դրամ,Նահապետ Ավետյան-9500/ինը հազար հինգ հարյուր/ դրամ,Անահիտ Գեղամյան-10000 /տաս հազար/ դրամ,Երջիկ Թադևոսյան-6400 /վեց հազար չորս հարյուր/ դրամ,Գարիկ Թարոյան-70000/յոթանասուն հազար/ դրամ,Լյուդվիգ Սահակյան-19800/տասնինը հազար ութ հարյուր/ դրամ , Մամիկոն Հակոբյան-6400/վեց հազար չորս հարյուր / դրամ և Արայիկ Դանիելյան-68000/վաթսունութ հազար/դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԳԱՄ
2. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ
3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ԹԱԴԵՒՈՍՅԱՆ ՍԱՇԱ
5. ԻՍԱՋԱՆՅԱՆ ԿԱՄՈ
6. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ
7. ՄՀԵՐՅԱՆ ԽՈՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԻՍԱՋԱՆՅԱՆ